Հավելված 6
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ-21/12»* ծածկագրով
Գնանշման հարցման հրավերի

ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2021Թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ VI ԳՈՏՈՒ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ և ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ-21/12-5»

ք. Վանաձոր «30» 12 2021թ.

«Վանաձորի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Մ. Ասլանյան -ի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Աշոտ Մկրտչյան»ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Պապանյան-ի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է 2021թ. Առաջին եռամսյակի համար Վանաձոր համայնքի VI գոտու փողոցների սանիտարական մաքրման և կենցաղային աղբահանության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

Ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

Բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4[17]

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այնունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **10790122 (տաս միլիոն յոթ հարյուր իննսուն հազար հարյուր քսաներկու)** ՀՀ դրամ:[18]

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 [19]

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը: [20]

---

[17] *Հանվում է պայմանագրից, եթե մատուցվելիք ծառայությունը չի վերաբերում շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի քաղաքաշինական փորձաքննության իրականացմանը:*

[18] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջնե պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայությ մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսվ գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է ն ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից ս չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարող յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցվ ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպք Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարմ ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրայ պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե ռ եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմե չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազ ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցությ միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սա պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երբ ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագր ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

[22]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնությ Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավ համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմա հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնմ գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստա Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծ է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումնե մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքե համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համ առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետությ

---

[19] Կատարողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճ սահմանվում է Պատվիրատուի և Կատարողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ա սույն կետը հանվում է նախագծից:

[20] Պարբերությունը հանվում է, եթե ծառայությունը չի վերաբերում ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգմանը:

[21] Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարմ հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանվ ընդհանուր գնի նկատմամբ:

[22] Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում

օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 [23]

7.7 [24]

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով

---

[23] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[24] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[25]

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վանաձորի համայնքապետարան	«Աշոտ Մկրտչյան» ՍՊԸ
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22	Ք. Վանաձոր, Տավրոսի7-րդ փողոց 13
Կենտրոնական գանձապետարան	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 900232545021	ՀՀ 1150018530310334
ՀՎՀՀ 06901936	ՀՎՀՀ 06940324
----------Մ.Ասլանյան	----------Ա. Պապանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

[25] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N
« 30 » 12 20[illegible]թ. Կնքվա
«ՀՀ ԼՄԿՔ ԳՀԾՁԲ-21/12-5» ծածկագրով պայմանագր

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրա

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
6	90511100/537	«2021թ. Առաջին եռամսյակի համար Վանաձոր համայնքի VI գոտու փողոցների սանիտարական մաքրման և կենցաղային աղբահանության ծառայություններ»	դրամ	10790122	1	Տես ներքևում	Կողմերի միջև համաձայնագրի կնքման օրվանից 01.04.2021թ

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

VI գոտու համար

Անհրաժեշտ է իրականացնել Վանաձոր համայնքի VI գոտու՝ Տավրոս, Տարոն, Առափնյա թաղամասերի կենցաղային աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունները:

Ամենօրյա մաքրման աշխատանքները պետք է ավարտվեն առավոտյան ժամը 830-ին: Փողոցների մայթերի ու հրապարակների ամառային մաքրման ժամանակ կատարողը պետք է ապահովի սպասարկվող տարածքներից աղբի ու փոշու հեռացումը, բարելավի միկրոկլիման և նվազեցնի օդի փոշոտվածության աստիճանը: Սահմանված նորմաներին համապատասխան կցված սպասարկվող տարածքի սահմաններում՝ սկսելով աշխատանքը, կատարողը նախ և առաջ պետք է մաքրի փողոցը կամ հրապարակը:

Հիմնական մաքրումն իրականացնելուց հետո կատարողը պետք է հետևի սպասարկվող տարածքի մաքրությանը, հավաքի ծխախոտի մնացորդները, թղթի կտորները և այլ աղբի մնացորդները, մաքրի մայթերը, մերձվածքային մասը, տեղադրված աղբարկղերի շրջակայքը և տարածքների մաքրությունն ապահովող այլ պարտականություններ:

Մաքրվող տարածքներից կատարողը աղբը և փոշին պետք է մաքրի ավլելու միջոցով՝ օգտագործելով նաև գոգաթիակ:

Մաքրված աղբը և փոշին կույտերով պետք է հավաքի դրանց հետագա տեղափոխման համար նպատակահարմար միջկույտային հեռավորությամբ, և ապա համապատասխան մեքենայով տեղափոխվի մոտակա արտոնագրված աղբաթափման վայր:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնի սպասարկվող տարածքում տեղադրված աղբարկղերի շրջակայքի սանիտարական վիճակին, աղբի ժամանակին հավաքման և տեղափոխման վրա:
Կենցաղային աղբահանությանը և սանիտարական մաքրումը պետք է ապահովվի ձյան տեղումների միջև ընկած ժամանակաշրջանում:

Պետք է իրականացվի · գոյացող կենցաղային և ոչ կենցաղային աղբի հավաքման, պահման, փոխադրման, աղբավայրում տեղադրման, փողոցների տարբեր տարողունակություն ունեցող աղբամանների աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունները:

Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների իրականացման ժամանակ պետք է.

- նվազեցնել և չեզոքացնել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական (վտանգավոր) ներգործությունը,
- ապահովել բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ աղբի փոխադրման իրականացումը կազմակերպել՝ բացառելով շրջակա միջավայրի աղտոտումը,
- աղբը տեղադրել օրենսդրությամբ սահմանված կարգով արտոնագրված աղբավայրերում:

Աշխատանքները կատարվելու են ամենօրյա, ձեռքի և մեքենայացված եղանակով:
Յուրաքանչյուր անգամ աղբարկղերը դատարկելուց մաքրել հարակից տարածքը:

Աղբահանության ծառայություններն իրականացնելու ժամանակ աղբարկղը աղբատար մեքենա դատարկելուց թափված աղբը և հարակից տարածքը մաքրել: Աղբարկղերը ամիսը մեկ անգամ

ախտահանել հատուկ նյութերով: Վանաձոր համայնքի VI գոտու տարածքում տեղադրված աղբարկղերից աղբը հեռացնել ամենօրյա հաճախականությամբ, իսկ մասնավոր հատվածում աղբահանությունն իրականացնել շրջիկ երթերի միջոցով, շաբաթը երկու անգամ: Բազմաբնակարան բարձրահարկ շենքերի աղբամուղերը սպասարկել մինչև +5 C0-ի դեպքում առնվազն երեք օրը մեկ անգամ, +5 C0-ից ավել ջերմաստիճանի առկայության դեպքում ամեն օր: Աղբամուղի տարածքն ավլել և մաքրել: Մեքենաները աղբավայր մեկնելուց հետո անպայման ենթարկվել աղտահանիչ միջոցներով լվացման: Ինքնաթափ մեքենաներով աղբի տեղափոխումը իրականացնելու ժամանակ մեքենաները պարտադիր պետք է ծածկոցներով ծածկված լինեն: Աղբահանությունը անհրաժեշտ է իրականացնել Վանաձոր համայնքի ղեկավարի աշխատակազմի հետ նախապես համաձայնեցված գրաֆիկով:

VI գոտու փաստացի մաքրվող մակերեսը մեկ օրվա համար՝ 71150 մ2: Մաքրվող տարածքից մինչև մոտակա արտոնագրված աղբաթափման վայր և հետադարձի երկարությունը կազմում է 29 կմ Կենցաղային աղբի կուտակման քանակը 2021 թվականի առաջին եռամսյակի համար VI գոտում կանխատեսվում է 1392.210 տն:

Առկա են Վանաձոր համայնքի VI գոտու փողոցների սանիտարական մաքրման և կենցաղային աղբահանության ծառայությունների մատուցելու համար անհրաժեշտ 2 հատ ինքնաթափ-բեռնատարողությունը՝ առնվազն 5տն, և 2 հատ հատուկ կահավորված բարձող մեքենա ԿՕ-բեռնատարողությունը՝ 8մ3 կամ ավելի, 4 հոգի վարորդ/ վարորդական իրավունքի վկայական B,C կարգ, առնվազն 3 տարվա աշխ.ստաժ/, 4 հոգի բարձող բանվոր և 5 հոգի մաքրող բանվոր:

Կից ներկայացվում է Վանաձոր քաղաքի VI գոտու սանիտարական մաքրման փողոցների ցանկը, ինչպես նաև կենցաղային աղբահանության իրականացման ցանկն ըստ փողոցների, աղբարկղերի տեղերի և աղբամուղերի:

Վանաձոր քաղաքի VI գոտու փողոցների սանիտարական մաքրում

N	Փողոցների անվանումը	Փողոցի երկարությունը	Փողոցի լայնությունը	Փողոցի մաքրվող երկարությունը	Փողոցի մաքրվող լայնությունը	Մաքրվող մակերեսը բ/մ օր
1.	Բաղրամյան պողոտա	1950	15	1950	7	13650
2.	Դեմիրճյան էստակադա-Անանիա Շիրակացի	3000	12	3000	6	18000
3.	Շիրակի խճ, Նարեկացի	2700/5000	15/14	4230	8	33840
4.	Էստակադա /Դեմիրճյան,-Բաղրամյան/	160	18	160	6	960
5.	Տավրոսի 6-րդ փողոց	700	7	700	5	3500
6.	Զեյթունի փողոց	300	6	300	4	1200
	Ընդամենը՝					71150

Վանաձոր քաղաքի VI գոտու
թաղամասերից կենցաղային աղբահանության իրականացման ժամանակացույց

Փողոցի անվանումը	Աղբարկղ քանակը /հատ/	Մաքրման հաճախա կանությունը	Բազմաբնակարան շենքերի հասցեներ	Աղբամուղների քանակ	Մաքրման հաճախա կանությունը
Բաղրամյան փողոց					
Թիվ 17 դպրոց	1	ամենօրյա			
17-րդ դպրոցի դիմաց	3	ամենօրյա			
Շիրակի խճուղի 4-2 գազաբալոնների ստուգման կետ	1	ամենօրյա			
▪ Սեզամ գազ	2	ամենօրյա	Թևոսյան 13ա	1	երեք օրը մեկ
▪ Այգ ռեստորան	2	ամենօրյա	Թևոսյան 13բ	1	երեք օրը մեկ
▪ Արփի ավտոգազ	1	ամենօրյա			
▪ Ավտոխանութի մոտ	1	ամենօրյա			երեք օրը մեկ
▪ ՈՒկրշին տն. ավան	4	ամենօրյա			
▪ 17-րդ դպրոցի բակ	2	ամենօրյա			
Շիրակի խճուղի					
▪ արհեստական մետաքսի կոմբինատի տարածք	3				
▪ միջնամաս(կոնգոյի փոս)	2				
▪ մտավոր հետամնացների դպրոցի տարածք	6				
▪ Փողոցի վերջնամաս	1				
Նարեկացի փողոց	10	ամենօրյա	Նարեկ. 5-րդ փակ	1	երեք օրը մեկ
Թևոսյան փողոց					երեք օրը մեկ
▪ սկզբնամաս	2	ամենօրյա			երեք օրը մեկ
▪ միջնամաս	4	ամենօրյա			
▪ վերջնամաս	3	ամենօրյա			
▪ Սարի թաղ	2	ամենօրյա			
▪ Սեզամ գազի մոտ	3				
▪ Երկաթուղու մոտ	4				
▪ Վան Բուլանժեի տարածք	1				
Դեմիրճյան փողոց					
Էլ. ցանց	1				
<<Պրիզ>> տաքսի	1				
Սերպանտին	1				
Ավտոլվացման կետ	2				
Տարոն-1	4	ամենօրյա			
Տարոն-2	43	ամենօրյա			
Տարոն-3	8	ամենօրյա			
Տարոն-4	39	ամենօրյա			
	154			3	

Վանաձոր քաղաքի VI գոտու թաղամասերից կենցաղային աղբահանության իրականացման ժամանակացույց/շրջիկ/

h/h	Փողոցի անվանումը	Մաքրման հաճախականությունը
	Տավրոս 1-ին փողոց	շաբաթական երկու անգամ
	Տավրոս 2-րդ փողոց	շաբաթական երկու անգամ
	Տավրոս 3-րդ փողոց	շաբաթական երկու անգամ
	Տավրոս 1-ին փող 3-րդ նրբ	շաբաթական երկու անգամ
	Տավրոս 4-րդ փողոց	շաբաթական երկու անգամ
	Տավրոս 6-րդ փողոց	շաբաթական երկու անգամ
	Տավրոս 7-րդ փողոց	շաբաթական երկու անգամ
	Տավրոս 8-րդ փողոց	շաբաթական երկու անգամ
	Տավրոս 9-րդ փողոց	շաբաթական երկու անգամ
	Տավրոս 10-րդ փողոց	շաբաթական երկու անգամ
	Տավրոս 12-րդ փողոց	շաբաթական երկու անգամ
	Տավրոս 13-րդ փողոց	շաբաթական երկու անգամ
	Տավրոս 14-րդ փողոց	շաբաթական երկու անգամ

	Տավրոս 15-րդ փողոց	շաբաթական երկու անգամ
	Տավրոս 16-րդ փողոց	շաբաթական երկու անգամ
	Տավրոս 17-րդ փողոց	շաբաթական երկու անգամ
	Տավրոս 18-րդ փողոց	շաբաթական երկու անգամ
	Տավրոս 19-րդ փողոց	շաբաթական երկու անգամ
	Տավրոս 20-րդ փողոց	շաբաթական երկու անգամ
	Տավրոս 21-րդ փողոց	շաբաթական երկու անգամ
	Տավրոս 22-րդ փողոց	շաբաթական երկու անգամ
	Բաղրամյան 1-ին փող	շաբաթական երկու անգամ
	Բաղրամյան 2-րդ փող	շաբաթական երկու անգամ
	Լեռնային	շաբաթական երկու անգամ
	Լեռնային 1-ին	շաբաթական երկու անգամ
	Գործարանային	շաբաթական երկու անգամ
	Առափնյա փողոց	շաբաթական երկու անգամ
	Նարեկացի 21 շենք	շաբաթական երկու անգամ
	Նարեկացի 37 շենք	շաբաթական երկու անգամ
	Նարեկացի 39 շենք	շաբաթական երկու անգամ
	Նարեկացի 43 շենք	շաբաթական երկու անգամ
	Նարեկացի 3ա շենք	շաբաթական երկու անգամ
	Նարեկացի 3բ շենք	շաբաթական երկու անգամ
	Նարեկացի 3վ շենք	շաբաթական երկու անգամ
	Թևոսյան 13ա	շաբաթական երկու անգամ
	Թևոսյան 13բ	շաբաթական երկու անգամ
	Աղամյան փող.	շաբաթական երկու անգամ
	Չարենց փող.	շաբաթական երկու անգամ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վանաձորի համայնքապետարան
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900232545021
ՀՎՀՀ 06901936

----------Մ.Ասլանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Աշոտ Մկրտչյան» ՍՊԸ
Ք. Վանաձոր, Տավրոսի7-րդ փողոց 13
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1150018530310334
ՀՎՀՀ 06940324

----------Ա. Պապանյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N
« 30 » 12 2019թ. Կնք
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ-21/12-5» ծածկագրով պայմանա

Վանաձոր համայնքի առաջին եռամսյակի համար VI գոտու կենցաղային աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման

կենցաղային աղբահանություն						
Հ/հ	գոտին	1 երթի երկ. և տեղափ. գոտու ներսում/կմ/	չափման միավորը	ծավալը	միավորի գինը/ դրամ/ առանց շահույթի և ԱԱՀ	արժեքը /դրամ/
1	2	3	4	5	6	7
1	VI գոտի Տավրոս, Տարոն Աջափնյա,"Առդա"թաղամասեր	29	տն	1392.210	5073,5	7063377,4
	Ընդամենը					7063377,4
	Շահույթ 11%					776971,5
	Ընդամենը					7840348,9

Սանիտարական մաքրում				
	չափման միավորը	մաքրվող մակերես քմ /օր	միավորի արժեքը 1 ք.մ. -ի համար /առանց շահույթի և ԱԱՀ-ի/	արժեքը 90 օրվա համար /դրամ/
1	2	3	4	5
VI գոտի Տավրոս Տարոն Աջափնյա "Առդա" թաղամասեր	մ^2	71150	0,415	2657452,5
Ընդամենը				2657452,5
Շահույթ 11%				292319,8
Ընդամենը				2949772,3
կենցաղային աղբ+սանիտարական մաքրում ընդհանուր				10790122

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վանաձորի համայնքապետարան
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900232545021
ՀՎՀՀ 06901936

----------Ս.Ասլանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Աշոտ Մկրտչյան» ՍՊԸ
Ք. Վանաձոր, Տավրոսի7-րդ փողոց 13
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1150018530310334
ՀՎՀՀ 06940324

----------Ա. Պապանյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N
«30» 12 20[illegible]թ. Կնքվ
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀՇՁԲ-21/12-5» ծածկագրով պայմանագ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրա

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամեն
6	90511100/537	«2021թ. Առաջին եռամսյակի համար Վանաձոր համայնքի VI գոտու փողոցների սանիտարական մաքրման և կենցաղային աղբահանության ծառայություններ»	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենք 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվեր դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վանաձորի համայնքապետարան
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 9002325450 21
ՀՎՀՀ 06901936

----------Ս.Ասլանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Աշոտ Մկրտչյան» ՍՊԸ
Ք. Վանաձոր, Տավրոսի7-րդ փողոց 13
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1150018530310334
ՀՎՀՀ 06940324

----------Ա. Պապանյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« 30 » 12 2020թ. Կնքված
«ՀՀ ԼՄԿՔ ԳՀԾՁԲ-21/12-5» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 30 » 12 2020թ. Կնքված
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ-21/12-5» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն